

**Գիվան հայ վիճագրության, պրակ VIII, Ռուսաստանի Դաշնություն, աշխատասիրությամբ Գր. Մ. Գրիգորյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1999, 313 էջ:**

Պատմությունը ստույգ է դառնում, երբ շարադրվում է անհերքելի փաստերի օգտագործմամբ: Այս առումով մեծ արժեք են ներկայացնում վիճական արձանագրությունները: Ինչպես Հայաստան աշխարհը, այնպես էլ Հայաստանից դուրս, ձևկատարի պարտադրանքով ըստեղծված հայկական գրեթե բոլոր գաղթավայրերը հարուստ են քարակերտ մատյաններով: Վիճական արձանագրությունները հաճախ եզակի սկզբնաղբյուր են դառնում Հայաստանի ու հայոց պատմության քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ խնդիրների ուսումնասիրության համար: Նրանցում հարուստ տեղեկություններ կան ագրարային ու հարկային ռազմաքաղաքականության՝ հարկերի տեսակների, բնույթի, չափերի և այլնի վերաբերյալ: Վիճագրերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում ավատատիրական հասարակարգի կառուցվածքի, իշխանական տնների, հողատիրության ձևերի, իրավաբանական հարաբերությունների, կրթական ու մշակութային կենտրոնների և հայոց կյանքի տարբեր բնագավառների մասին:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը Հայաստանի XI—XV դդ. պատմության գիտական ամբողջական ուսումնասիրության համար, այլ սկզբնաղբյուրների հետ խիստ կարևորել է վիճական արձանագրությունների լիարժեք օգտագործումը (Հ. Մանանդյան, Երկեր, Երևան, 1977, էջ 12):

Մեզանում մի շարք նշանավոր հայագետներ դեռևս անցյալ դարի 30—40-ական թվականներից ձեռնամուխ են եղել վիճագրերի հավաքագրման ու հրատարակման շնորհակալ դործին: Այս ասպարեզում իրենց ավանդն են բերել Մ. Բժշկյանը, Ս. Զալալյանցը, Հ. Եսահանջյանը, Մ. Բարխուդարյանցը, Կ. Կոստանյանցը, Դ. Ալիշանը և այլք:

Հայ վիճագրերի հավաքման ու ամբողջացման գործում մեծ վաստակ ունեն Հ. Օրբելին, Կ. Ղաֆադարյանը, Ս. Բարխուդարյանը, Ս. Ավագյանը, Հ. Զանփաղյանը և ուրիշները: Այս բնագավառում լուրջ ավանդ ունի հայտնի վիճագրագետ և պատմաբան, դոկտոր սրբաբան Գր. Գրիգորյանը:

Հայաստանի միջնադարյան պատմության վե-

րաբերյալ Գր. Գրիգորյանը հեղինակել է մի քանի կարևոր աշխատություններ, որոնցից հատկապես հիշատակելի են «Սյունիքը Օրբելյանների օրոք» (1981 թ.) և «Очерки истории Сюника IX—XV вв.» (1990 թ.) հիմնարար աշխատությունները: Գր. Գրիգորյանը տարիներ շարունակ մասնակցել է Ռուսաստանի, Ուկրաինայի և Սոլովյայի հայ գաղթավայրերն ուսումնասիրող արշավախմբերին, դժվարությամբ և ջանասիրությամբ հավաքել հայերեն, ռուսերեն, լեհերեն, լատիներեն, մասամբ հայատառ ղրիչաղերեն արձանագրություններ, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում հիշյալ երկրների հայ գաղթավայրերի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքի վերաբերյալ:

Գր. Գրիգորյանի մեղմաբան աշխատանքի արդյունքն են «Գիվան հայ վիճագրության» մատենաշարի VII և VIII պրակները: 1996 թ. լույս տեսած VII պրակում ամփոփված են Ուկրաինայի և Սոլովյայի տարածքներից հավաքած արձանագրությունները, իսկ վերջերս հրատարակված VIII պրակում՝ Ռուսաստանի Դաշնության տարածքից բնօրինակած և վերծանածները:

Իրենց պատմական հայրենիքից մեծ թվով հարկադրաբար արտագաղթած հայերը սկսած XIII—XIV դդ. նոր բնօրրաններ հիմնադրեցին Սև և Կասպից ծովերի ափերից մինչև Բալթիկայի ափերն ու Կարպատները, որոնք աստիճանաբար մտան Ռուսական կայսրության կազմի մեջ:

Իրենց նոր բնակավայրերում հայերը ձեռնամուխ եղան տնտեսական, շինարարական և մշակութային գործունեության՝ ստեղծելով համարակալին մնայուն արժեքներ, որոնց մասին հակիրճ պատմում են վիճագիր արձանագրությունները: Այդ արձանագրությունները հավաստի տեղեկություններ են հաղորդում հայ գաղթավայրերի տնտեսական, իրավաբանաքաղաքական հարաբերությունների, մշակույթի ու կրթական կյանքի, տարբեր ազգերի և ազգությունների հետ հայերի ունեցած կապերի ու հարաբերությունների մասին:

Գր. Գրիգորյանի՝ Ռուսական Դաշնության տարածքից հավաքած վիմագրերն ու թանգարանային նմուշներից բաղկած արձանագրությունները վկայում են հայ և ռուս ժողովուրդների դարավոր, բազմապիսի առնչությունների, խառն գաղթավայրերում հայագիտության դարձիկներն ու զարգացման մասին:

Պրոֆեսոր Գրիգորյանը Ռուսաստանի Դաշնության խոշոր գաղթավայրերի վիմագրերը վերծանելուն համընթաց պատմական էքսկուրսի է կատարում պատմության խորքերը: Ցուցահերթով հայ և ռուս ժողովուրդների պատմության լավ իմացություն, նա վեր է հանում հայերի խաղացած կարևոր դերը ռուսական պետության թաղաքական, տնտեսական, առևտրական, մշակութային և այլ ասպարեզներում:

Գր. Գրիգորյանի քննախույզ հայացքից շի վրիպել և ոչ մի մանրամասնություն: Նա բազմակողմանի ու հանգամանալից նկարագրում է այն հուշարձանները կամ հուշարձանախումբը, որոնցից թաղել է վիմագրերը, խորիմացություն մակարագրելով հուշարձանների մանրամասները, հուշակոթողները, գերեզմանաբարերը՝ իրենց յուրատիպ թանգարաններով և այլն:

Ռուսաստանի Դաշնության տարածքից հավաքված վիմագրերն ու թանգարանային ցուցանմուշների արձանագրություններն եզակի ու հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Դաշնության տարածքի հայ գաղթավայրերի գիտության, մշակույթի, պետական ու ղինվորական հայ գործիչների, հոգևորականների, արհեստների, արհեստագործների, վաճառականների ու արդյունաբերողների մասին: Այս ուղուց էլ էլ ճիշտ է վարվել պրոֆեսոր Գրիգորյանը, երբ նշանավոր հայ գործիչների ու մտավորականների մասին ծանոթագրություններում տվել է նրանց կյանքի ու գործունեության վերաբերյալ համառոտ, բայց խիստ կարևոր տեղեկություններ (էջ 22, 24, 30, 35, 40, 41... և այլն): Այս կարգի ծանոթագրություններ, որոնք հեղինակի պատմագիտական պաշարի ու ընդգրկումի վկայություններն են, կան պրակի գրեթե բոլոր էջերում: Այդ ծանոթագրություններում Գր. Գրիգորյանը համադիր քննության է առնում տարբեր վիմագրագետ հեղինակների վերծանումները, առաջարկում է իր ճշգրտումները և հիմնավորում դրանք: Ինչպես VII, նույնպես VIII պրակներում կազմող հեղինակը հակիրճ անդադարձել է անվանաբանական (օճմաստիկ) երևույթներին, մատնանշելով միջավայրի թելադրանքով առաջացած հայկական մի շարք անուն-ազգանունների, պաշտոնների ու տիտղոսների, ռուսականացման դեպքերը, որոնք արձանագրություններում արտացոլված են հայատառ ռուսերենով կամ բառացի թարգմանու-

թյամբ: Ուսումնասիրողին մեծ ջանքերի դեռվ հաջողվել է բացել տալ Մոսկվայի Կրեմլի թանգարանների ֆոնդերում պահպանվող հայկական իրերով լեցուն սնդուկները և ընդորինակել նրանց վրա եղած անխտիր բոլոր մակագրությունները: Այս բնագրերն իրենց բովանդակությամբ նորույթ են հայագիտության համար, քանզի իրեն սկզբնաղբյուրներ առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

Պատմական արժեքները ընկալելու և հըմտորեն գնահատելու ունակությունների շնորհիվ Գր. Գրիգորյանը քննարկվող պրակի վերջում գետեղել է եկեղեցիների աշխարհիկ շինությունների, Մոսկվայի Կրեմլի թանգարաններում պահպանվող հայկական խուլերի, զանազան սպասքների և առարկաների, գեղազարդ խաչների ու այլ իրերի լուսանկարները՝ իրենց արևանագիր վկայություններով, որոնք արժանահավատ տեղեկություններ են հաղորդում հայականավոր մտավորականների, պետական ու ղինվորական գործիչների ազգանպաստ գործունեության վերաբերյալ: Ծարտարապետական կառույցներն, իրեն ու առարկաները՝ իրենց նախազարդերով, մանրանկարչական պատկերներով, հորինվածքային առանձնատեսություններով հայ կիրառական արվեստի եզակի նմուշներ են ստեղծված հայրենիքից հեռու գտնվող հայ հանճարի կողմից: Պրոֆ. Գրիգորյանը կատարել է ծավալուն ու հայրենանվեր աշխատանք, որի շնորհիվ անդարձ կորստից փրկվել են հայոց պատմության, հայ գաղթավայրերի հասարակական, մշակութային, իրավական, տնտեսական և այլ խնդիրներին վերաբերող բազմաթիվ խոստեն վկայագրեր: VIII պրակը ունի հայերեն ու ռուսերեն հակիրճ ներածականներ, սպասված է գիտական ապարատը: Միայն հայրենասիրությունն ու իր ժողովրդի սրտմուկության հանդեպ պարտքի խորոգիտակցումը, այսօրվա դժվարին պայմաններում, կարող էր պրոֆ. Գրիգորյանին մղել գիտական սխառնք կատարելու շրջել Ռուսաստանի Դաշնության անժայրածիր տարածքով, խընամքում հավաքել դարերի ընթացքում ստեղծված հայոց պատմության ու մշակույթի հոգևոր արժեքները, իրականացնել մատյանի հրատարակության դժվարին խնդիրը և այն հանձնել դարերի քննությանը:

Հնձնոված առիթն օգտագործելով, ուզում ենք հստակ նշել հայ եկեղեցու ականավոր հայրերի՝ գերաշնորհ արքեպիսկոպոսներ Շահն Ռճեմյանի և Մեսրոպ Աշճյանի կատարած մեծ դերը «Դիման հայ վիմագրության» մատենաշարի VIII պրակը լույս ընծայելու գործում:

Պատմ. գիտ. զոկտոր ԳեղԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ